ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N Ռ-25

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «21» 01 20.. թ.

Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիան (այսուհետ՝ ԳԱԱ), ի դեմս նախագահ Ռաֆիկ Մարտիրոսյանի, որը գործում է ԳԱԱ-ի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Վարդան Դևրիկյանի , որը գործում է Կազմակերպությանկանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեով նախատեսված 66.413.300 վաթսունվեց միլիոն չորս հարյուր տասներեք հազար երեք հարյուր ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, Ծրագրի առաջադրանքը, *այդ թվում՝ նպատակը*, օրացուցային պլանը, *այդ թվում՝ ակնկալվող արդյունքները, դրանց որակական և քանակական ցուցանիշները*, նախահաշիվը և կատարողների մասին տեղեկությունները ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 ԳԱԱ-ն իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի **2.4** կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի **6**-րդ մասով նախատեսված տուգանքը,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.3.3 ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել ԳԱԱ-ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել ԳԱԱ,

2.4.6 ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում ԳԱԱ ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ԳԱԱ-ի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 25-ը:

3 Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 66.413.300 վաթսունվեց միլիոն չորս հարյուր տասներեք հազար երեք հարյուր ՀՀ դրամ:

4 Մոնիթորինգ

4.1 ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մոնիթորինգն իրականացվում է ԳԱԱ-ի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3 Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4.4 Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ և արվում են առաջարկություններ:

5 Վճարման կարգը և ժամկետները

5.1 ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 ԳԱԱ-ն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6 Կողմերի պատասխանատվությունը

Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7 Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե

անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9 Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից ԳԱԱ ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ ԳԱԱ	
ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24	ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ ք. Երևան, Գ. Լուսավորչի 15
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011024115 ՀՎՀՀ 00005673	ՀՀ Կենտրոնական գանձապետարան Հ/հ 900018005364 ՀՎՀՀ 02505623
Նախագահ՝ _____ *(ստորագրություն)* ԱՌԱՔԵԼ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Կ. Տ.	Տնօրեն՝ _____ *(ստորագրություն)* Վարդան Դևրիկյան Կ. Տ.

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (_____)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Հավելված N 1
«21» 01 20.. թ.
N Ռ-25 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, ՀՀ ԳԱԱ-ի նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը և Կազմակերպության տնօրեն Վարդան Դերիկյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել «21» հունվարի 2020 թ. N Ռ-25 պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝66.413.300 վաթսունվեց միլիոն չորս հարյուր տասներեք հազար երեք հարյուր ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ ԳԱԱ	Կազմակերպություն
Նախագահ	Տնօրեն՝
(ստորագրություն)	(ստորագրություն)
ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ	Վարդան Դերիկյան

Հավելված N 2
«21» 01 20.. թ.
N 02-25 պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

«Հայ գրականության պատմություն և տեսություն, հայ դասականների երկերի ակադեմիական հրատարակություն» ծրագրի
(ծրագրի անվանումը)

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջե:
2. Աշխատանքի նպատակը (1 պարբերություն):

Ինստիտուտի մեծ և փոքր բազային ծրագրերով իրականացվող աշխատանքների նպատակն է հայ գրականության պատմության համալիր ուսումնասիրությունը գրականության պատմության պարբերացմամբ, ժանրային համակարգով և գրական ուղղություններով, ինչպես նաև հայ դասականների երկերի ակադեմիական հրատարակությունները ճշգրտված բնագրերով և գիտական ծանոթագրություններով ներկայացնելը:

1. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (մինչև 1 էջ):

Կատարվող աշխատանքները պետք է համապատասխանեն գրականագիտության արդի չափանիշներին, հիմնված լինեն աղբյուրագիտական, գրական սկզբնաղբյուրների, ինչպես նաև տեսական դրույթների վրա, պարունակեն գիտական նոր տվյալներ:

Հայ գրականությունը պետք է դիտարկվի ոչ միայն պատմական զարգացման մեջ, այլև հարևան ժողովուրդների և ընդհանրապես համաշխարհային գրականության համատեքստում:

Պարտադիր պայման է քննարկվող հարցերի վերաբերյալ հայ և օտար ժամանակակից գիտնականների տեսակետների վկայակոչումը:

Հայ դասականների երկերի հրատարակության ծրագրի շրջանակում Հովհաննես Թումանյանի երկերի լիակատար ժողովածուի համալրված վերահրատարակման, Ավետիք Իսահակյանի և Նիկոլ Աղբալյանի երկերի հրատարակությունների ժամանակ տպագրվող գործերը պետք է մանրակրկիտ համեմատվեն բնագրերի հետ, ինչպես որ արվել է մինչև այժմ: Պետք է ներկայացվեն այդ երկերի ստեղծագործական պատմությունները, նրանց գործերում հիշատակվող հատուկ անունների բացատրությունները տրվեն, ինչպես նաև նշվեն սուրբգրային տեղիները:

Հայ գրականությունը համաշխարհային գրականության համատեքստում դիտարկելու, ինչպես նաև ընդգծելու համար ունեցած կարևորությունը տարբեր երկրների և ժողովուրդների պատմության համար աղբյուրագիտական առումով, հրատարակել հայ միջնադարյան

սկզբնաղբյուրներում եվրոպական երկրների մասին եղած հիշատակությունները «Հայկական սկզբնաղբյուրները եվրոպական երկրների մասին» խորագրի ներքո:

2. Աշխատանքի բովանդակությունը (մինչև 3 էջ):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԸ

Ինստիտուտում խնդիր է դրվել հայ գրականության պատմությունը ուսումնասիրել համաշխարհային գրականության պատմության համատեքստում և ըստ այդմ, քննել գրականության պատմության ընթացքը: Ելնելով այս դրույթից, մեծ տեղ է տրվում քննության համեմատական մեթոդին: Համաշխարհային գրականության թափառական սյուժեների հայ գրականության մեջ արտացոլմանը, տարբեր ժանրերի ստեղծագործությունների տիպաբանական ընդհանրություններին այլ գրականությունների հետ:

Նույն այս խնդրի տեսանկյունից կրկնակիորեն են կարևորվում հայ միջնադարյան գրականության թարգմանության տեսական սկզբունքների մշակումը: Իմաստային և գիտականորեն ճիշտ ներկայացման և երկրորդ՝ այդ ստեղծագործությունների հանրահռչակման տեսանկյուններից:

Հինգերորդ դարի հայ պատմագրության տարբեր լեզուներով թարգմանությունը կարևորվում է թե՛ այդ հեղինակների և Հայոց պատմության հանրահռչակման և թե՛ այդ ստեղծագործությունների ունեցած գեղարվեստական արժանիքները ներկայացնելու տեսանկյունից:

Նման մոտեցմամբ պատմիչ առ պատմիչ պատմագրական ամեն երկի գրաբար բնագիրը համեմատվում է աշխարհաբար, ռուսերեն և անգլերեն թարգմանությունների հետ: Նշվելու են թարգմանությունների մեջ առկա տարբերությունները:

ԹՈՒՄԱՆՅԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Այս տարի լույս կտեսնեն

-Հովհ. Թումանյանի վերախմբագրված վերահրատարակության չորրորդ՝ բանաստեղծի պոեմների մի մասը և թարգմանական պոեմներն ընդգրկող հատորը:

-Հինգերորդ՝ գեղարվեստական արձակն ընդգրկող հատորը:

-«Թումանյանը ժամանակակիցների հուշերում» 1969 թ. ծավալուն հատորի երկու հատորով վերախմբագրված վերահրատարակության առաջին հատորը:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՐԱԿԱՆ ԿԱՊԵՐ

2020թ. հրատարակության կպատրաստվի «5-18-րդ դարերի հայկական սկզբնաղբյուրները եվրոպական երկրների մասին» գրքի երկրորդ՝ «5-18-րդ դարերի հայկական աղբյուրները Իսպանիայի մասին» հատորը:

ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Իրականացվում է Հովհաննես Թումանյանի կյանքի և գործունեության տարեգրության կազմումը և հրատարակումը չորս հատորով: Արդեն լույս են տեսել առաջին երեք հատորները:

2020 թ. լույս կտեսնի տարեգրության վերջին՝ չորրորդ հատորը, որն ընդգրկելու է բանաստեղծի կյանքի և գործունեության 1919-1923թթ:

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ (Վարդան Դևրիկյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (Վարդան Դևրիկյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Հավելված N 3
«21» 01 20.. թ.
N Ա-25 պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ՊԼԱՆ *

«Հայ գրականության պատմություն և տեսություն, հայ դասականների երկերի ակադեմիական հրատարակություն» ծրագրի
(ծրագրի անվանումը)

հ/հ	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները	կատարման ժամկետները	պահանջվող գումարը (հազար դրամ)
1	Թումանյանը ժամանակակիցների հուշերում. Հտ. առաջին	Թումանյանի մասին եղած հուշերի մի մասի հրատարակումը	1969 թ. տպագրված հուշերի բնագրերի ճշտում, կրճատված հատվածների վերականգնում, նոր ծանոթագրություններ ի ավելացում	Թումանյանի հուշերը ներկայացնել ճշգրտված և ամբողջական բնագրերով, որը կօգնի առավել ամբողջականորեն ներկայացնելու մեծ բանաստեղծի հուշագրական կերպարը	2020թ. փետրվար	(գումարը տրամադրելու է Թումանյանի թանգարանը)
2	Հովհաննես Թումանյան, Երկերի լիակատար ժողովածուի 4-րդ հատորի վերախմբագրված վերահրատարակություն	Թումանյանի պոեմները	Ճշգրտված բնագրեր նոր ծանոթագրություններով	Առավել ամբողջական և ճշգրտված բնագրերով և յուրաքանչյուր ստեղծագործության պատմությամբ կներկայացվեն Թումանյանի մի շարք պոեմները	2020թ. մարտ	(գումարը տրամադրելու է Թումանյանի թանգարանը)
3	Հովհաննես Թումանյան, Երկերի լիակատար ժողովածուի 5-րդ հատորի վերախմբագրված վերահրատարակություն	Թումանյանի արձակ ստեղծագործությունները	Ճշգրտված բնագրեր նոր ծանոթագրություններով	Առավել ամբողջական և ճշգրտված բնագրերով և յուրաքանչյուր ստեղծագործության պատմությամբ կներկայացվեն Թումանյանի հեքիաթները և	2020թ. նոյեմբեր	(գումարը տրամադրելու է Թումանյանի թանգարանը)

* *Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել եռամսյակային փուլերով*

				պատմվածքները		
4	Խրիմյան Հայրիկ. Կյանքը և գրական ժառանգությունը	Խրիմյանի գրական ժառանգությունը կներկայացվի նրա գործունեության կոնտեքստում	Ամբողջական ձևով կներկայացվի Խրիմյանի գրական ժառանգությունը	Գրքում կճշգրտվեն Խրիմյան Հայրիկի և 19-րդ դարի երկրորդ կեսի հայ գրականության պատմությանը վերաբերող մի շարք հարցեր: Այս հրատարակությունը կնպաստի Խրիմյանի երկերի հանրահռչակմանը	2020 թ. Ապրիլ	Կտպագրվի «Համազգային կրթամշակութային» միության կողմից
5	Թումանյան-150. Գիտաժողովի նյութեր				2020թ. ապրիլ	550.000 դրամ Լույս կտեսնի Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի կողմից
6	V-XVII դարերի հայկական աղբյուրները Իսպանիայի մասին	«V-XVII դարերի հայկական աղբյուրները Եվրոպայի մասին» մատենաշարի առաջին հատորն է, ուր ներկայացվում են հայ մատենագրության մեջ մինչև 17-րդ դարի վերջը եղած մատենագրական վկայությունները:	Ձեռագիր և տպագիր աղբյուրներից դուրս են հանվում հայ հեղինակների գործերի Իսպանիային վերաբերող հատվածները և համապատասխան ծանոթագրություններով ու տեղեկություններով, ինչպես նաև համառոտ անգլերեն վերաշարադրմամբ ներկայացվում:	Կնպաստի հայ-իսպանականգրական կապերի և պատմական փոխհարաբերությունների ուսումնասիրմանը, Եվրոպայի կերպարի հայկական ընկալմանը:	2020 թ. դեկտեմբեր	1.500.000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ (հատկացնելու է Գ. Գյուլբենկյան հիմնադրամը)
7	Լևոն Շանթ-150. Հոբելյանական գիտաժողովի նյութերը				2020թ. փետրվար	Լույս կտեսնի Հայագիտական ուսումնասիրո

						ությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի կողմից
8	Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն (1919-1923)	Թումանյանի կյանքի և ստեղծագործության 1919-1923թթ. շրջանն ընդգրկող գիտական տարեգրությունը	Ըստ արխիվային վավերագրերի և Թումանյանի նամակների ու հարակից այլ նյութերի կազմվում է բանաստեղծի կյանքի ժամանակագրության վերջին հատվածը	Ներկայացնում է բանաստեղծի կյանքի տարեգրության տվյալ ժամանակահատվածը և օգնում ավելի ամբողջական հասկանալու Թումանյանի երկերի ստեղծագործական պատմությունը	2020թ. հոկտեմբեր	2.300.000 (երկու միլիոն երեք հարյուր հազար) դրամ Գումարը հատկացնելու է ԿԳՍՄ նախարարությունը
Ընդամենը						

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ (Վարդան Դերիկյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (Վարդան Դերիկյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Հավելված N 4
«21» 01 20.. թ.
N Գ-25 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Հայ գրականության պատմություն և տեսություն, հայ դասականների երկերի ակադեմիական հրատարակություն» ծրագրի

հազար դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման ծավալը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	63663.0	*12732.7*	*15915.7*	*15915.7*	*19098.9*
2	տնտեսական և այլ ծախսեր	2750.3	*550.0*	*687.6*	*687.6*	*825.1*
ԸՆԴԱՄԵՆԸ		**66413.3**	**13282.7**	**16603.3**	**16603.3**	**19924.0**

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ Վ. Դևրիկյան
(ստորագրություն)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ Ս. Սոլակյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 4.1
«21» 01 20.. թ.
N Ա-25 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ †

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը, առանց ԱԱՀ (հազար դրամ)
1	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	2137.0
	էլեկտրաէներգիայի ծառայություն	*1500.0*
	գազի ծառայություն	
	ջրամատակարարման ծառայություն	*287.0*
	կապի ծառայություն	*350.0*
	աղբահանություն	
2	Գույք	
3	Սարքեր և սարքավորումներ	
4	Նյութեր	113.3
5	Գործուղումներ	
6	Գիտական միջոցառումների կազմակերպում	
7	Արշավախմբեր	
8	Հրատարակման ծախսեր	500.0
	.....	
Ընդամենը		**2750.3**

Կազմակերպության տնօրեն՝ _____ Վ. Դերիկյան
(ստորագրություն)

Կազմակերպության
գլխավոր հաշվապահ՝ _____ Ս. Սոլակյան
(ստորագրություն)

Կ.Տ.

* *Բուհերում իրականացվող ծրագրերի համար չի լրացվում*

Հավելված N 5
«21» 01 20.. թ.
N Ա-25 պայմանագրի

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Հայ գրականության պատմություն և տեսություն, հայ դասականների երկերի ակադեմիական հրատարակություն» ծրագրի

(ծրագրի անվանումը)

Հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Պաշտոն	Գիտական աստիճան	Աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը* (հազար դրամ)
1	Դևրիկյան Վարդան Գևորգի	Տնօրեն	բ.գ.դոկտոր	170000
2	Աբրահամյան Սուրեն Սերյոժայի	Բաժնի վարիչ	բ.գ.թեկնածու, դոցենտ	98000
3	Ալեքսանյան Սլավիկ Գարսևանի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու	90600
4	Ալեքսանյան Ամալյա Խաչիկի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու	90600
5	Աղաբաբյան Գայանե Սուրենի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու	90600
6	Ավանեսյան Արմեն Ավանեսի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու	93750
7	Ավետիսյան Զավեն Վասիլի	Առաջատար գիտաշխատող	բ.գ.դոկտոր, պրոֆեսոր	90600
8	Ավետիսյան Լուսինե Արարատի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու	93750
9	Ավետիսյան Սաթենիկ Հարությունի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու, դոցենտ	90600
10	Արիստակեսյան Ռուզաննա Բուլիկի	Առաջատար գիտաշխատող	բ.գ.դոկտոր	90600
11	Բալայան Նաիրա Մելսիկի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու, դոցենտ	93750
12	Բարսեղյան Բելլա Ղևոնդի	Առաջատար գիտաշխատող	բ.գ.դոկտոր	89700
13	Բեջանյան Քրիստինե Հենրիկի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու, դոցենտ	93750
14	Գալոյան Էմմա Ժորայի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու	93750
15	Գասպարյան Գուրգեն Էդվարդի	Գիտաշխատող		47000
16	Գասպարյան Լուիզա Արեգի	Բաժնի վարիչ	բ.գ.թեկնածու	113750
17	Դեմիրճյան Պետրոս	Ավագ	բ.գ.դոկտոր	90600

* *Աշխատավարձը՝ ներառյալ եկամտային հարկը, չպետք է ցածր լինի, քան Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձը*

	Հակոբի	գիտաշխատող		
18	Էդոյան Հենրիկ Անտոնի	Բաժնի վարիչ	բ.գ.դոկտոր, պրոֆեսոր	90600
19	Թորոսյան Հայկուշ Ռաֆիկի	Գրադարանավար		90600
20	Իսահակյան Ավետիք Վիգենի	Տնօրենի խորհրդական, բաժնի վարիչ	բ.գ.դոկտոր, պրոֆեսոր	90600
21	Խաչատրյան Մարգարիտա Մամիկոնի	Բաժնի վարիչ	բ.գ.դոկտոր	111000
22	Խաչատրյան Շողիկ Բորիկի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու	90600
23	Խաչատրյան Թադևոս Արշավիրի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու	90600
24	Կարագյոզյան Գոհար Լևոնի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու	90600
25	Կիրակոսյան Վլադիմիր Աղասու	Խմբի ղեկավար	բ.գ.դոկտոր, պրոֆեսոր	111000
26	Հակոբյան Անահիտ Պիոնի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու	90600
27	Համբարձումյան Նաիրա Վալերիկի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու, դոցենտ	93750
28	Հայրյան Զարուհի Գևորգի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու, դոցենտ	90600
29	Հարությունյան Լաուրա Ժորայի	Ավագ լաբորանտ		124000
30	Հովհաննիսյան Սուսաննա Գուրգենի	Առաջատար գիտաշխատող	բ.գ.դոկտոր, դոցենտ	90600
31	Հովհաննիսյան Քրիստինե Բանդիկի	Գիտաշխատող		93750
32	Ղազարյան Անի Վաչիկի	Ավագ գիտաշխատող - հմկ. օպերատոր	բ.գ.թեկնածու	93750
33	Ղազարյան Դերենիկ Զարմայիլի	Պահակ		110000
34	Ղազարյան Վաչիկ Վանուշի	Տնտեսվար		109000
35	Մանուկյան Արմեն Լևոնի	Թիմ խմբի ղեկավար	բ.գ.թեկնածու	98000
36	Մարգարյան Սիրուշ Ալեքսանդրի	Բաժնի վարիչ	բ.գ.թեկնածու, դոցենտ	111000
37	Մելքումյան Քրիստինե Խորենի	Գործերի կառավ. և գործավար, կրտսեր գիտաշխատող		100000
38	Մկրտչյան Նունե Լենսերի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու, դոցենտ	90600
39	Մուշեղյան Ալբերտ Վարազդատի	Առաջատար գիտաշխատող	բ.գ.դոկտոր	90600

40	Մնացականյան Եվա Ժորայի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու	90600
41	Նավասարդյան Վահան Սուրենի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու, դոցենտ	90600
42	Նիկողոսյան Արքմենիկ Հրայրի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու	93750
43	Որսկանյան Հերիքնազ Վանիկի	Փոխտնօրեն, գիտքարտուղար	բ.գ.թեկնածու	130000
44	Սարգսյան Մարինե Հրանտի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու	90600
45	Սարգսյան Նառա Ղարիբի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու	93750
46	Սարիբեկյան Հրաչյա Հարությունի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու	93750
47	Սարինյան Մանե Սերգեյի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու, դոցենտ	90600
48	Սեյրանյան Լիլիթ Բորիսի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու, դոցենտ	90600
49	Սոլակյան Միլվա Վարդգեսի	Լաբորանտ		90600
50	Սոլակյան Սոնա Վարդգեսի	Գլխ. հաշվապահ		160000
51	Ստեփանյան Սերգեյ Լևոնի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու, դոցենտ	93750
52	Վարդանյան Լուսինե Մկրտչի	Ավագ գիտաշխատող	բ.գ.թեկնածու	93750
53	Վարժապետյան Իրիտա Դանիելի	Գիտաշխատող		90600
54	Վիրաբյան Լաուրա Կարապետի	Գիտաշխատող		45300
55	Տերտերյան Աստղիկ Աշոտի	Մաքրուհի		93750
Ընդամենը				**5305250**

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ (Վարդան Դևրիկյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կազմակերպության անձնակազմի կառավարման բաժնի պետ՝ _____ (Քրիստինե Մելքումյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

L.S.